

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 10-ի N թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ԵԲ-ԲՄԾՁԲ-18/112

I. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պատվիրատուն՝ Երևանի քաղաքապետարանը, որը գտնվում է ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում, Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ԵՄ4 «Երևան.Արևային համայնք» (393-505) ծրագրի իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք բաց մրցույթի հնարավոր մասնակիցների որոշման նպատակով հայտարարում է նախատրակավորման ընթացակարգ՝ հետևյալ չափաբաժիններով՝

ՉԱՓԱԲԱԺԻՆ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ
Չափաբաժին 1	Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ԵՄ4 «Երևան.Արևային համայնք» (393-505) ծրագրի կարիքների համար լուսավորության ճարտարագետի ներգրավման ծառայության ձեռքբերում
Չափաբաժին 2	Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ԵՄ4 «Երևան.Արևային համայնք» (393-505) ծրագրի կարիքների համար կայուն էներգետիկայի ֆինանսավորման բնագավառում կարճաժամկետ ավագ փորձագետի ներգրավման ծառայության ձեռքբերում
Չափաբաժին 3	Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ԵՄ4 «Երևան.Արևային համայնք» (393-505) ծրագրի կարիքների համար էներգետիկ աուդիտոր/էներգաարդյունավետության փորձագետի ներգրավման ծառայության ձեռքբերում

Համառոտ ակնարկ

Երևանի քաղաքապետարանը ԵՄ աջակցությամբ իրագործում է «Երևան. Արևային համայնք» ծրագիրը, որը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 13.02.2018թ. հ.111-Ա որոշմամբ: Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2018-2020թթ. ընթացքում:

Երևան քաղաքում բնակչության մեծամասնությունը՝ ավելի քան երկու երրորդը (շուրջ 720000 բնակիչ), ապրում է բազմաբնակարան շենքերում: Երևանում առկա է շուրջ 4900 բազմաբնակարան շենք, որից շուրջ 2300-ում առկա է վերելակ: Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» համաձայն՝ բնակելի շենքերին բաժին է ընկնում քաղաքի բազային էներգասպառման կեսը: Ծրագրի նպատակն է բազմաբնակարան շենքերում նվազեցնել էներգետիկ սպառումը և դրա հետ փոխկապակցված ջերմոցային գազերի արտանետումները (ՋԳ)՝ էներգախնայողության միջոցառումների իրականացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով:

Ծրագրի նպատակն է աջակցել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին (համատիրություններին) էներգասպառման կառավարման գործում՝ էներգաարդյունավետության միջոցառումների կիրառման և տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման միջոցով՝ ապահովելով բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրությունը (ջրամուտքերի, աստիճանավանդակների լուսավորություն, վերելակի էլեկտրաէներգիա, բակային լուսավորություն և այլն):

Արևային վահանակները նախատեսվում է տեղադրել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի տանիքներին (շուրջ 90 շենք): Այսպիսով, արևային վահանակների տեղադրումը շենքի տանիքներում շահավետ կլինի բոլորի համար: Ֆոտովոլտային կայանի արտադրած էներգիան

ամբողջությամբ կծածկի շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների և բակային տարածքների էներգիայի սպառման պահանջարկը, իսկ ավելցուկը կվաճառվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին: Եկամուտները կկուտակվեն համապատասխան համատիրությունների էներգետիկ շրջանառու ֆոնդերում և կարող են օգտագործվել շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացման հետագա ներդրումների համար: Հիմնականում, ծառայության վճարների ցածր գներով և ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված՝ համատիրությունները մեծ դժվարությամբ են իրականացնում շենքերի պատշաճ սպասարկումը: Ծրագրի իրականացման արդյունքում առաջացած եկամուտը թույլ կտա համատիրություններին ֆինանսավորել շենքի էներգաարդյունավետության միջոցառումները և այլն:

ԶԱՓԱԲԱԺԻՆ 1

Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակը

1. Ծառայության շրջանակը, նշանակման նպատակը

Լուսավորության ճարտարագետը ծրագրի աշխատանքային խմբի ղեկավարի համակարգմամբ պատասխանատու կլինի ծրագրի տեխնիկական բաղադրիչի նախագծման և ներդրման համար, ներառյալ՝

ա) շենքերի ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության համակարգի ԷԱ միջոցառումների նախագծման և տեխնիկական առաջադրանքների մշակում, բ) լուսադիոդային լուսավորության տեղադրումների համար նախատեսվող ապրանքների և ծառայությունների գնման տեխնիկական առաջադրանքների մշակում, գ) ԷԱ լուսավորության համակարգի արդիականացման արդյունքում տնտեսումների մոնիտորինգ, տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ, էներգետիկ տնտեսումների ազդեցության գնահատում/գնահատման մոնիտորինգ դ) շրջանառու հիմնադրամի և էներգետիկ կառավարման թափանցիկ համակարգի ստեղծմանն աջակցություն, ե) «Արևային ուղեցույցի» և Համայնքային էներգետիկ կառավարման գործիքի մոդելի մշակման գործում ներդրում,

զ) քաղաքապետարանի աշխատակազմի համար դասընթացների անցկացում լուսավորության արդիականացման վերահսկման և շահագործման աշխատանքների համար, ԷԱ դասընթացների անցկացում՝ քաղաքային էներգետիկ պլանավորման կարողությունների ստեղծման/զարգացման նպատակով:

2. Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

- Վարչական շրջանների աշխատակազմի աջակցությամբ շուրջ 100 բնակելի շենքի ընդհանուր օգտագործման տարածքների էներգետիկ սպառման գնահատմանը մասնակցություն (վերելակներ, ներշենքային և արտաքին լուսավորություն)
- Ընդհանուր օգտագործման տարածքների լուսավորության համար առկա լուսավորության ենթակառուցվածքի, օգտագործվող լուսատուների, տեխնիկական ցուցանիշների, լուսավորության բազային հարմարավետության ուսումնասիրություն (վերելակի ներսի հատված, շքամուտք, աստիճանավանդակ, բակային տարածք)
- Կայուն էներգետիկայի ֆինանսավորման կարճաժամկետ ավագ փորձագետի և էներգետիկ աուդիտոր/էներգաարդյունավետության փորձագետի հետ համատեղ մշակել շենքերի ընտրության հատուկ չափորոշիչներ (ԷԱ առումով)՝ հիմնված դրանց տեխնիկական բնութագրերի վրա
- Որպես ծրագրի իրականացման թիմի անդամ՝ աջակցություն ընտրված շենքերի տվյալների բազայի ձևավորմանը
- Շենքերում և բակային տարածքներում էներգաարդյունավետության միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծություն, որը կօգտագործվի ծրագրի ղեկավարների կողմից շենքերի կառավարման մարմինների և սեփականատերերի հետ հաղորդակցման ռազմավարության մշակման համար
- Կայուն էներգետիկայի ֆինանսավորման կարճաժամկետ ավագ փորձագետի և էներգետիկ աուդիտոր/էներգաարդյունավետության փորձագետի հետ համատեղ բազային ուսումնասիրության անցկացման, արդյունքների գնահատման, մասնակիցների համար ձևանմուշի և այլ տեխնիկական առաջադրանքի մշակում
- Մշակել լուսավորության լուծումներ, որոնք կապահովեն նվազագույն էներգատարության լուսավորություն՝ համաձայն ազգային նորմերի
- Մշակել տեխնիկական առանձնահատկությունների (առաջադրանք) և ապրանքների և ծառայությունների գնման լուտերի, մրցութային փաստաթղթերի, էներգաարդյունավետ լուսավորության ապահովման գնումների փաթեթներ (համապատասխանության չափանիշներ, գնահատման բանաձև և այլն)

- Արտադրանքի և ծառայությունների ձեռքբերման համար մշակել տեխնիկական առանձնահատկություններ և լուտեր, մրցութային փաստաթղթեր, EE լուսավորության վերականգնման համար գնումների փաթեթներ
- Լուսադիոդային լուսատուների գնումներին և մրցութներին մասնակցություն, աջակցություն հայտատուների տեխնիկական առաջարկի գնահատման գործընթացին
- Շենքերի էներգետաարդյունավետության միջոցառումների տեխնիկական վերահսկողության իրականացում
- Աջակցություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի ստեղծման և EIM-ի ներդրման, վերլուծության և հաշվետվությունների կազմման գործընթացին, էներգետիկ կառավարման և EIM օգտագործման վերաբերյալ համայնքային ծառայողների և համատիրության աշխատակիցների մասնակցությամբ դասընթացների կազմակերպում
- Շենքերի կառավարման մարմինների համար դասընթացների անցկացում էներգետիկ տնտեսումների մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ՝ որպես էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի մի մաս
- Աջակցություն շրջանառու հիմնադրամի հայեցակարգի մշակմանը և դրա ստեղծմանը
- Աջակցություն «Արևային ուղեցույցի» և համայնքային էներգետիկ կառավարման գործիքի մշակման գործում
- Տեղադրված էներգաարդյունավետ լուսատուների էներգետիկ խնայողությունների և տեխնիկական ցուցանիշների մոնիտորինգի իրականացում, հաշվետվությունների ներկայացում և ազդեցության գնահատում
- Մասնակցություն Ծրագրի հանրային հասանելիության և տեսանելիության, ինչպես նաև ծրագրով նախատեսված այլ գործողություններին
- Դրամաշնորհային պայմանագրի իրականացման հետ կապված այլ աշխատանքներ

3. Ակնկալվող արդյունքներ

- Ընտրված շենքերի լուսավորության համակարգերի արդիականացման վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ նախատեսվող վերականգնվող էներգետիկ միջոցառումների ծախս-օգուտների վերլուծությունը
- Գնումների իրականացման գործընթացում լուսավորության համակարգի արդիականացման ծառայությունների և ապրանքների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքի կազմում
- Նախատեսվող էներգաարդյունավետ լուսավորման միջոցառումների ծախս- օգուտների վերլուծության հաշվետվություն,
- Ուղեցույց/խորհրդատվություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի և շրջանառու հիմնադրամի ստեղծման առնչությամբ
- Իրականացված էներգաարդյունավետ միջոցառումների արդյունքում առաջացած էներգետիկ տնտեսումների մոնիտորինգ
- Իրականացված միջոցառումների ազդեցությունը գնահատող մոնիտորինգ և հաշվետվություն, ներառյալ՝ յուրաքանչյուր շենքի համար հաշվարկված ՋԳ արտանետումների կրճատման վերաբերյալ տեղեկատվություն՝ քաղաքապետարանին և դոնորներին ներկայացվելիք հաշվետվության համար
- Բազմաբնակարան բնակելի շենքերի սեփականատերերի և համատիրությունների համար «Արևային ուղեցույցի» համապատասխան հատվածի ներկայացում
- Դասընթացներ և վերապատրաստման նյութեր
- Մասնակցություն քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների առևտրի կազմակերպությունների համագործակցության մոդելի մշակման գործընթացին
- Վերոհիշյալ առաջադրանքների հետ կապված այլ արդյունքներ

4. Փորձագետի պահանջվող որակավորումները

- Ճարտագիտության ոլորտի բուհական աստիճան
- Էներգաարդյունավետլուսավորման լուծումների նախագծման և կիրառման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ
- Արտաքին և ներշենքային էներգաարդյունավետ լուսավորության միջազգային ստանդարտների և փորձի գերազանց իմացություն
- Հայաստանում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի քաղաքականության և իրավական դաշտի գերազանց իմացություն
- Արտաքին և ներշենքային էներգաարդյունավետ լուսավորության պրակտիկ գիտելիքներ
- ՀՀ գնումների պահանջների իմացություն
- Վերլուծությունների իրականացման և հաշվետվությունների ներկայացման գերազանց հմտություններ
- Հայերենի և անգլերենի իմացություն

5. Աշխատանքների տևողությունը՝ 24 ամիս՝ երկարացման հնարավորությամբ:

6. Վճարման պայմանները

Վճարումը կկատարվի ՀՀ դրամով: Աշխատանքի գնահատման տևողությունը կազմում է 96 օր՝ 24 ամսվա ընթացքում: Վճարները կիրականացվեն ամսական կտրվածքով՝ տեխնիկական առաջադրանքի բազային պահանջների և ներկայացրած արդյունքների հիման վրա:

7. Գաղտնիությունը

Փորձագետը՝ ծրագրին և դրա մանդատին վերաբերող իրեն հասանելի դարձած ցանկացած տեղեկություն պետք է պահի հույժ գաղտնի և չպետք է հայտնի որևէ երրորդ կողմի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Այս պայմանը գործում է նաև պայմանագրի ավարտից հետո՝ առանց ժամանակային սահմանափակման:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակը

1. Ծառայության շրջանակը, նշանակման նպատակը

Ավագ ֆինանսական փորձագետը պատասխանատու կլինի «Երևան.Արևային համայնք» ծրագրի բիզնես մոդելի մշակման, ՀՄՀ-(PPP) սխեմայի հիման վրա գնումների պահանջների մշակման, կառավարման սխեմայի համար, ինչպես նաև աջակցություն կցուցաբերի Ծրագրի իրագործման աշխատանքային խմբին (այսուհետև՝ ԾԻԱԽ)՝ ծրագրի կառավարման գործում, զգալի ներդրում կունենա «Արևային ուղեցույցի» և Համայնքային էներգետիկ կառավարման գործիքի մոդելի մշակման գործում: Փորձագետը աշխատելու է ԾԻԱԽ-ի հետ՝ տեխնիկական առաջադրանքների, նախատեսվող աշխատանքների ծավալների և սարքավորումների ձեռքբերման պայմանագրերի, հաշվետվությունների, ֆինանսական, բյուջետային կառավարման և այլ փաստաթղթերի մշակման նպատակով:

1. Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

- Մեկնարկային հաշվետվության նախագծի մշակում, այդ թվում՝ ծրագրի տրամաբանական շրջանակի թարմացում և կանխատեսված ռիսկերի վերագնահատում:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ մանրամասն աշխատանքային պլանի մշակում:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ ծրագրի հաղորդակցման պլանի մշակում:
- Գնումների պլանի մշակում՝ հիմնված էներգետիկ աուդիտորի, լուսավորության մասնագետի և ԾԻԱԽ-ի կողմից տրամադրված տեղեկատվության վրա:
- Աջակցություն միջանկյալ և ավարտական հաշվետվությունների մշակմանը:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ ՀՄՀ մոդելի մշակում, որում արտացոլված կլինի քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների առևտրային կազմակերպությունների համագործակցության սխեման:
- Էներգախնայողության շրջանառու հիմնադրամի հայեցակարգի մշակում:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ համատիրությունների համար հիմնադրամի գործունեության և կառավարման վերաբերյալ դասընթացների անցկացում:
- ԾԻԱԽ-ի հետ համատեղ նոր ֆինանսական մոդելի մշակում,՝ հիմնված շրջանառու հիմնադրամի վրա՝ այլ համատիրությունների կողմից կրկնօրինակման հնարավորությամբ:
- Էներգախնայող լուսավորության տնտեսումների, արևային էլեկտրաէներգիայի օգտագործման և ավելցուկային արևային էլեկտրաէներգիայի վաճառքի (net metering) վերաբերյալ տեխնիկական հաշվետվությունների և մոնիտորինգի արդյունքների վերահսկողություն՝ ԾԻԱԽ-ի և ծրագրի տեխնիկական փորձագիտական թիմի հետ համատեղ:
- Միջազգային լավագույն փորձի հիման վրա, օրենսդրության համապատասխան համատիրություններում շրջանառու հիմնադրամի ստեղծման և գործունեության կազմակերպման համար փաստաթղթերի պատրաստում՝ ԾԻԱԽ-ի հետ համատեղ:
- Աջակցություն նախագծի մոնիտորինգի և հաշվետվությունների կազմման, ինչպես նաև էներգաարդյունավետության ավելի լայն տեղեկատվության կառավարման համակարգի ստեղծմանը, կատարողականության չափման գնահատման մեթոդաբանության և այլ առավելությունների սահմանման գործում:
- ԾԻԱԽ-ի և վարչական շրջանների աշխատակազմի հետ համատեղ «Արևային ուղեցույցի» մշակում, որը կապահովի պիլոտային փորձի հիման վրա «Երևան.Արևային համայնք» մոդելի կրկնօրինակումը՝ հետագայում նմանատիպ այլ շենքերում իրականացնելու համար: Բազմաբնակարան շենքերում ընդհանուր օտագործման տարածքների լուսավորության և վերելակների շահագործման համար

անհրաժեշտ էլեկտրաէներգիայի պահանջարկի ապահովման համար բացառապես միայն վերականգնվող էներգիայի օգտագործման մոդելի ստեղծում և, փորձնական գործողությունների իրականացման միջոցով, համապատասխան գնահատման հիման վրա մշակված մոդելի ընդլայնում:

- ԾԻԱԽ-ի և ծրագրի տեխնիկական փորձագիտական թիմի հետ համատեղ, որպես «Արևային ուղեցույց» մի բաղադրիչ, նախագծի իրագործման ֆինանսատնտեսական ուսումնասիրություն/գնահատում՝ ԵՄ ֆինանսավորման բացակայության պայմաններում տարբեր ֆինանսական սխեմաների (վարկավորում, լիզինգ, մասնավոր պետական գործընկերություն, ածխածնային ֆինանսներ) օգտագործմամբ արևային վահանակների տեղադրման համար:
- Աջակցություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի ստեղծման և EIM-ի ներդրման, վերլուծության և հաշվետվությունների կազմման գործընթացին, էներգետիկ կառավարման և EIM օգտագործման վերաբերյալ համայնքային ծառայողների և համատիրության աշխատակիցների մասնակցությամբ դասընթացների կազմակերպում:
- Համատիրությունների, հանրության և այլ համայնքների կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն:
- ԾԻԱԽ-ի և ծրագրի տեխնիկական փորձագիտական թիմի հետ համատեղ գնման/մրցութային փաստաթղթերի մշակում (ներառյալ տեխնիկական առաջադրանքները)՝ համաձայն ազգային օրենսդրության և ԵՄ ուղեցույցների, ինչպես նաև աջակցություն հայտատուների գնահատման գործընթացին:
- Աջակցություն շենքերի ընտրության հատուկ չափորոշիչների մշակման գործընթացին:
- Որպես ծրագրի իրականացման թիմի անդամ՝ աջակցություն ընտրված շենքերի տվյալների բազայի ձևավորմանը:
- Մասնակցություն Ծրագրի հանրային հասանելիության և տեսանելիության, ինչպես նաև ծրագրով նախատեսված այլ գործողություններին:
- Դրամաշնորհային պայմանագրի իրականացման հետ կապված այլ աշխատանքներ:

2. Ակնկալվող արդյունքներ

- Մեկնարկային հաշվետվություն
- Գնումների պլան
- Հաղորդակցման պլան
- Շենքերում արևային վահանակների օգտագործման համար կրկնօրինակման ներդրումային մոդել
- Էներգախնայողության շրջանառու հիմնադրամի հայեցակարգ
- Բազմաբնակարան բնակելի շենքերի սեփականատերերի և համատիրությունների համար «Արևային ուղեցույց» համապատասխան հատվածի ներկայացում
- PPP մոդել, քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների առևտրի կազմակերպությունների համագործակցության սխեմա
- Վերոհիշյալ առաջադրանքների հետ կապված այլ արդյունքներ

3. Փորձագետի պահանջվող որակավորումները

- Ֆինանսների, բանկային գործի, տնտեսագիտության,
- բնակարանային կառավարման, էներգետիկայի կառավարման կամ այլ հարակից ոլորտներում առաջատար բուհական աստիճան
- Առնվազն 7 տարվա փորձ էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի հետ կապված բնագավառում
- Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի ավագ վերահսկման և հաշվետվությունների ներկայացման ավելի քան 7 տարվա փորձ
- Միջազգային ծրագրերի մասնակցության փորձ, անկախության և պատասխանատվության բարձր աստիճան
- Էներգետիկ աուդիտների վերաբերյալ միջազգային ստանդարտների և փորձի գերազանց իմացություն
- Հայաստանում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի քաղաքականության և օրենսդրական դաշտի գերազանց իմացություն
- Էներգետիկ աուդիտի, էներգաարդյունավետության հավաստագրման, շենքերի էներգաարդյունավետ վերազինման բնագավառում պրակտիկ փորձ
- Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատելու աշխատանքային փորձ
- Արդյունքների և փաստերի վրա հիմնված կառավարման մոտեցում
- Գերազանց վերլուծական և հաշվետվությունների ներկայացման հմտություններ
- Միջանձնային և հաղորդակցման գերազանց հմտություններ
- Հայերենի և անգլերենի իմացություն

- Համակարգչային ծրագրերի լավ իմացություն (MS Word, Excel, PowerPoint, վեբ ծրագրեր):

4. Աշխատանքների տևողությունը՝ պայմանագրի կնքման ժամկետից մինչև 01.03.2020թ.՝ երկարացման հնարավորությամբ:

5. Վճարման պայմանները

Վճարումը կկատարվի ՀՀ դրամով: Աշխատանքի գնահատման տևողությունը կազմում է 180 օր՝ 24 ամսվա ընթացքում: Վճարները կիրականացվեն ամսական կտրվածքով՝ տեխնիկական առաջադրանքի բազային պահանջների և ներկայացրած արդյունքների հիման վրա:

6. Գաղտնիությունը

Փորձագետը՝ ծրագրին և դրա մանդատին վերաբերող իրեն հասանելի դարձած ցանկացած տեղեկություն պետք է պահի հույժ գաղտնի և չպետք է որևէ երրորդ կողմի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Այս պայմանը գործում է նաև պայմանագրի ավարտից հետո՝ առանց ժամանակային սահմանափակման:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3

Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակը

1. Ծառայության շրջանակը, նշանակման նպատակը

Էներգետիկ աուդիտոր/ Էներգաարդյունավետության փորձագետը ծրագրի աշխատանքային խմբի ղեկավարի համակարգմամբ պատասխանատու կլինի ծրագրի տեխնիկական բաղադրիչի նախագծման և ներդրման համար, ներառյալ՝

ա) թեկնածու շենքերի պարզ էներգետիկ աուդիտի իրականացում (վերելակներ, ընդհանուր օգտագործման տարածքներում ներշենքային և արտաքին լուսավորություն և այլն),

բ) արևային վահանակների տեղադրման համար տեխնիկական առանձնահատկությունների/առաջադրանքի մշակում և նախագծում,

դ) արևային վահանակների տեղադրման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գնումների կազմակերպման համար տեխնիկական առաջադրանքի մշակում,

ե) էներգետիկ տնտեսումների ազդեցության գնահատում և մոնիտորինգ,

զ) շրջանառու հիմնադրամի և էներգետիկ կառավարման թափանցիկ համակարգի ստեղծմանն աջակցություն,

է) «Արևային ուղեցույցի» և Համայնքային էներգետիկ կառավարման գործիքի մոդելի մշակման գործում ներդրում, ը) դասընթացի անցկացում՝ քաղաքային էներգետիկ պլանավորման կարողությունների ստեղծման/զարգացման նպատակով:

2. Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

- Լուսավորության փորձագետի հետ համատեղ, վարչական շրջանների աշխատակազմի աջակցությամբ շուրջ 100 բնակելի շենքի ընդհանուր օգտագործման տարածքների էներգետիկ սպառման գնահատման իրականացում (վերելակներ, ներշենքային և արտաքին լուսավորություն)
- Կայուն էներգետիկայի ֆինանսավորման կարճաժամկետ ավագ փորձագետի և լուսավորության փորձագետի հետ համատեղ մշակել շենքերի ընտրության հատուկ չափորոշիչներ՝ հիմնված դրանց տեխնիկական բնութագրերի վրա
- Որպես ծրագրի իրականացման թիմի անդամ՝ աջակցություն ընտրված շենքերի տվյալների բազայի ձևավորմանը
- Լուսավորության փորձագետի հետ համատեղ՝ համապատասխան տիպի շենքերում վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության միջոցառումների ծախս-օգուտների վերլուծություն, որը կօգտագործվի ծրագրի ղեկավարների կողմից՝ շենքերի կառավարման մարմինների և սեփականատերերի հետ հաղորդակցման ռազմավարության մշակման համար
- Յուրաքանչյուր շենքի համար էներգետիկ արդիականացման ծրագրի մշակում՝ համապատասխան տեխնիկական և տնտեսական հաշվարկներով և առաջարկվող տեխնոլոգիական փոխակերպմամբ
- Շահառու շենքերի համար նախատեսվող ապրանքների և ծառայությունների համար տեխնիկական առանձնահատկությունների (առաջադրանք) մշակում, գնման փաթեթների տեխնիկական օժանդակություն
- Աջակցություն հայտատուների տեխնիկական առաջարկի գնահատման գործընթացին
- Կայուն էներգետիկայի ֆինանսավորման կարճաժամկետ ավագ փորձագետի և լուսավորության փորձագետի հետ համատեղ բազային ուսումնասիրության անցկացման, արդյունքների գնահատման, մասնակիցների համար ձևանմուշի և այլ տեխնիկական առաջադրանքի մշակում

- Ծրագրի լուսավորության ճարտարագետի հետ համատեղ շենքերի էներգաարդյունավետության միջոցառումների և վերականգնվող էներգետիկ տեղադրումների տեխնիկական վերահսկողության իրականացում
- Աջակցություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի ստեղծման և EIM-ի ներդրման, վերլուծության և հաշվետվությունների կազմման գործընթացին, էներգետիկ կառավարման և EIM օգտագործման վերաբերյալ համայնքային ծառայողների և համատիրության աշխատակիցների մասնակցությամբ դասընթացների կազմակերպում
- Շենքերի կառավարման մարմինների համար դասընթացների անցկացում էներգետիկ տնտեսումների մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ՝ որպես էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի մի մաս
- Աջակցություն շրջանառու հիմնադրամի հայեցակարգի մշակմանը և դրա ստեղծմանը
- Աջակցություն «Արևային ուղեցույցի» և համայնքային էներգետիկ կառավարման գործի մշակման գործում
- Մասնակցություն Ծրագրի հանրային հասանելիության և տեսանելիության, ինչպես նաև ծրագրով նախատեսված այլ գործողություններին
- Դրամաշնորհային պայմանագրի իրականացման հետ կապված այլ աշխատանքներ

3. Ակնկալվող արդյունքներ

- Ընտրված շենքերի պարզ էներգետիկ աուդիտներ՝ ներառյալ նախատեսվող վերականգնվող էներգետիկ միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծությունը
- Ընտրված շենքերի լուսավորության համակարգերի մանրամասն էներգետիկ աուդիտի վերաբերյալ հաշվետվություն՝ ներառյալ նախատեսվող էներգաարդյունավետ լուսավորության միջոցառումների ծախսերի օգուտների վերլուծությունը
- Գնումների իրականացման գործընթացում արևային համակարգի տեղադրման ծառայությունների և ապրանքների ձեռք բերման տեխնիկական առաջադրանքի կազմում
- Ուղեցույց/խորհրդատվություն էներգախնայողության տեղեկատվության կառավարման (EIM) գործիքի և շրջանառու հիմնադրամի ստեղծման առնչությամբ
- Իրականացված միջոցառումների ազդեցությունը գնահատող մոնիտորինգ և հաշվետվություն, ներառյալ՝ յուրաքանչյուր շենքի համար հաշվարկված ԶԳ արտանետումների կրճատման վերաբերյալ տեղեկատվություն՝ քաղաքապետարանին և դոնորներին ներկայացվելիք հաշվետվության համար
- Մասնակցություն քաղաքապետարանի, համատիրությունների և արևային տեխնոլոգիաների առևտրի կազմակերպությունների համագործակցության մոդելի մշակման գործընթացին
- Բազմաբնակարան բնակելի շենքերի սեփականատերերի և համատիրությունների համար «Արևային ուղեցույցի» համապատասխան հատվածի ներկայացում
- Դասընթացներ և վերապատրաստման նյութեր
- Վերոհիշյալ առաջադրանքների հետ կապված այլ արդյունքներ

4. Փորձագետի պահանջվող որակավորումները

- Ճարտագիտության ոլորտի բուհական աստիճան
- Շենքերում էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգետիկային առնչվող միջոցառումների նախագծման և կիրառման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ
- Արևային համակարգերի տեղադրման, էներգետիկ աուդիտի անցկացման միջազգային ստանդարտների և փորձի գերազանց իմացություն
- Հայաստանում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի քաղաքականության և իրավական դաշտի գերազանց իմացություն
- Պարզէներգետիկաուդիտի անցկացման, էներգաարդյունավետության հավաստագրման (իրականացված էներգետիկական աուդիտների քանակ) պրակտիկ գիտելիքներ
- ՀՀ գնումների պահանջների իմացություն
- Վերլուծությունների իրականացման և հաշվետվությունների ներկայացման գերազանց հմտություններ
- Հայերենի և անգլերենի իմացություն

5. Աշխատանքների տևողությունը՝ պայմանագրի կնքման ժամկետից մինչև 01.03.2020թ.՝ երկարացման հնարավորությամբ:

6. Վճարման պայմանները

Վճարումը կկատարվի ՀՀ դրամով: Աշխատանքի գնահատման տևողությունը կազմում է 180 օր՝ 24 ամսվա ընթացքում: Վճարները կիրականացվեն ամսական կտրվածքով՝ տեխնիկական առաջադրանքի բազային պահանջների և ներկայացրած արդյունքների հիման վրա:

7. Գաղտնիությունը

Փորձագետը՝ ծրագրին և դրա մանդատին վերաբերող իրեն հասանելի դարձած ցանկացած տեղեկություն պետք է պահի հույժ գաղտնի և չպետք է հայտնի որևէ երրորդ կողմի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Այս պայմանը գործում է նաև պայմանագրի ավարտից հետո՝ առանց ժամանակային սահմանափակման:

II. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի նախատրակավորման ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

2. Նախատրակավորման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է բավարարի սույն հայտարարության մեջ ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին: Մասնակիցը համարվում է սույն ենթակետով նախատեսված որակավորման չափանիշին բավարարող, եթե հայտով ներկայացրել է պահանջվող տեղեկությունները:

3. Մասնակիցները նախատրակավորման ընթացակարգին կարող են մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) նախատրակավորման հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր:

2) նախատրակավորման հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները (համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին)

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

5) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

III. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՍՍԱՆԱԼՈՒԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆՄԵՋ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԿԱՐԳԸ

4. Մասնակիցն իրավունք ունի նախատրակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն մեկ օրացուցային օր առաջ հանձնաժողովից պահանջելու նախատրակավորման հայտարարության վերաբերյալ պարզաբանում: Ընդ որում պարզաբանումը կարող է պահանջվել մինչև սույն կետում նշված օրվա ժամը 11:00-ն (ընթացակարգի անցկացման վայրի ժամանակով): Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանում ընտրամադրում է հարցումը ստանալու օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան նախատրակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 3 ժամառաջ:

Սույն կետում նշվա ծհարցումը մասնակիցը ներկայացնում է հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

Հարցման մասին պարզաբանումն ուղարկվում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստից մասնակցի՝ հարցումը ստացված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

5. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է տեղեկագրում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

6. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հայտարարության բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող մեկ օրացուցային օրվա ընթացքում:

7. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երկու օրացուցային օր առաջ սույն հայտարարության մեջ կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը փոփոխություն կատարելու մասին հայտարարությունը հրապարակում է տեղեկագրում:

8. Նախատրակավորման հայտարարության մեջ փոփոխություններ կատարվելու դեպքում նախատրակավորման հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

IV. ՆԱԽԱՌՐԱՎՎՈՐՄԱՆ ՀԱՅՏՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒԿԱՐԳԸ

9. Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է հայտ:

10. Նախատրակավորման հայտը մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է փաստաթղթային ձևով՝ փակ ծրարով, սոսնձված: Ծրարի վրա նախատրակավորման հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա. Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն):

բ. Գնման ընթացակարգի ծածկագիրը:

գ. «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը:

դ. Մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

11. Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան **26.04.2018թ. ժամը 11:00-ն**:

Նախատրակավորման հայտերը հանձնաժողովի նանհրաժեշտ է ներկայացնել մինչև սույն կետով սահմանված ժամկետը լրանալը՝ **ք. Երևան, Արգիշտիի 1** հասցեով:

12. Նախատրակավորման հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության գնումների կազմակերպման բաժնի պետ **Գոռ Մուրադյանը**:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

13. Մասնակիցը նախատրակավորման հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված նախատրակավորման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում համաձայն հավելված N 1-ի, որում կատարվում է նշում նաև այն մասին, թե որ չափաբաժնի համար է ներկայացվում դիմումը,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հայտարարությամբ սահմանված որակավորման չափանիշի պահանջներին իր համապատասխանության մասին՝ համաձայն հավելված 2-ի,

3) ֆիզիկական անձ մասնակիցները ներկայանցում են նաև ինքնակենսագրական (CV),

4) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

14. Հայտում ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հայտարարության 13-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթի, ներկայացվում են բնօրինակից և թվով 2 պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

15. Նախատրակավորման հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

16. Ծրարը և սույն հայտարարությամբ նախատեսված մասնակցի կողմից կազմվող փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե նախատրակավորման հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ: Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հայտարարությամբ առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

V. ՆԱԽԱՌՐԱՎՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

17. Նախատրակավորման հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը կատարվում է նախատրակավորման հայտերի բացման նիստում՝ **26.04.2018թ. ժամը 11:00-ին ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում**:

18. Նախատրակավորման հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) հանձնաժողովը քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը, գրանցված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը.

բ. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը սույն հայտարարությամբ սահմանված վավերապայմաններին.

19. Բավարար են գնահատվում սույն հայտարարությամբ նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը: Հակառակ դեպքում նախատրակավորման հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում:

Եթե նախատրակավորման հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ սույն հայտարարության պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում սույն կետում նշված՝

1) առաջարկության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները.

2) առաջարկությունն ուղարկվում է մասնակցի՝ սույն հայտարարության մեջ նշված քարտուղարի էլեկտրոնային փոստից մասնակցի դիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

20. Եթե սույն հայտարարության 19-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Մասնակիցը շտկված փաստաթղթերը ներկայացնում է սույն ընթացակարգին մասնակցելու դիմումում նշված էլեկտրոնային փոստից հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

21. Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե նախատրակավորման հայտերի բացման նիստում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամփոխությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնուծնող, երեխա, եղբայրկանքույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա նախատրակավորման հայտերի բացման նիստից անմիջապես հետո սույն ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում ընթացակարգից:

22. Հայտերը բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին **կազմվում է արձանագրություն**, որով հաստատվում է նաև նախատրակավորված մասնակիցների ցուցակը: Հանձնաժողովի քարտուղարը հայտերի նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) իր և հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում.

2) սույն հայտարարությամբ նախատեսված պայմաններին անբավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային եղանակով ծանուցում է նախատրակավորման հայտերի մերժման հիմքերի մասին:

23. Բաց մրցույթի գործընթացին մասնակցելու իրավունք ստանում են նախատրակավորված մասնակիցների ցուցակում ընդգրկված մասնակիցները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել

հանձնաժողովի քարտուղար՝ **Գոռ Մուրադյանին**

Հեռախոս՝ 011 514373

Էլ. փոստ՝ gor.muradyan@yerevan.am

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

ԴԻՄՈՒՄ

Նախատրակավորման ընթացակարգին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել

մասնակցիանվանումը

Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԾՁԲ-18/112 ծածկագրով բաց մրցույթի (չափաբաժնի (չափաբաժինների) համարը) նախատրակավորման ընթացակարգին և նախատրակավորման հայտարարության պահանջներին պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

-ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____ :

մասնակցիանվանումը

հարկի վճարողի հաշվառման համարը

-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____ :

մասնակցիանվանումը

էլեկտրոնային փոստի հասցեն

_____ մասնակցիանվանումը (ղեկավարի պաշտոնը, անունազանունը)

_____ ստորագրություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով

Նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին համապատասխանության մասին

_____ հայտարարում և հավաստում է, որ հայտը ներկայացնելու

մասնակցի անվանումը

տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում մատուցել է ներքո հիշյալ ծառայությունները՝

Նախատրակավորման հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած պայմանագրերի		
h/h	առարկան	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
տարեթիվը թվական		
1		
2		
...		
տարեթիվը թվական		
1		
2		
...		
տարեթիվը թվական		
1		
2		
...		

Կ. Տ.